



ՀԿ



Միջազգային պաշտպանություն հայցող երեխաներ

**Տեղեկատվություն առանց ուղեցրդի
երեխաների համար, ովքեր դիմում են
միջազգային պաշտպանության համար՝
համաձայն թիվ 604/2013 Կանոնակարգի
(ԵՄ) 4-րդ հոդվածի**

Ձեզ տրամադրվել է այս փաստաթուղթը, քանի որ հայտնել էք, որ պաշտպանության կարիք ունեք և 18 տարեկանից ցածր եք: Եթե 18 տարեկանից ցածր եք, ապա համարվում եք երեխա: Կարող է նաև լսեք, որ իշխանության մարմինները Ձեզ անվանում են «անչափահաս», որը նույնն է, ինչ երեխա: «Իշխանությունները» այն անձիք են, ովքեր պատասխանատու են Ձեր ներկայացրած պաշտպանության հայցի վերաբերյալ որոշում ընդունելու հարցում:

Եթե այստեղ պաշտպանություն եք խնդրում, քանի որ Ձեր հայրենի երկրում ապրել եք վախի մեջ, մենք այն անվանում ենք «հայցել ապաստան»: Ապաստանը մի վայր է, որը պաշտպանություն և ապահովություն է տրամադրում:

Երբ Դուք պաշտոնապես դիմում եք իշխանություններին՝ խնդրելով ապաստան, ապա դա օրենքով կոչվում է «միջազգային պաշտպանության դիմում կամ հայց»: Այն անձը, ով պաշտպանություն է խնդրում, կոչվում է «դիմող»: Երբեմն կլսեք, որ մարդիկ Ձեզ անվանում են «ապաստան հայցող»:


Ձեր ծնողները պետք է Ձեզ հետ լինեին, սակայն եթե նրանք Ձեզ հետ չեն կամ նրանցից բաժանվել եք այստեղ գալու ճանապարհին, ապա Դուք համարվում եք «**առանց ուղեկցողի անչափահաս**»:

Այս դեպքում մենք Ձեզ «ներկայացուցիչ» կտրամադրենք, որը չափահաս անձ է և կօգնի Ձեզ այս գործընթացի ժամանակ: Նա Ձեզ կօգնի դիմում ներկայացնելու գործում և կարող է ուղեկցել Ձեզ, երբ ցանկանաք խոսել իշխանության մարմինների հետ: Դուք կարող եք Ձեր խնդիրների և անհանգստությունների մասին պատմել Ձեր ներկայացուցչին: Ձեր ներկայացուցչի նպատակն է ապահովել, որ Ձեր շահերը առաջնային տեղում լինեն, այսինքն՝ հաշվի առնվեն Ձեր կարիքները, ապահովությունը, բարեկեցությունը, սոցիալական զարգացումը և Ձեր կարծիքները: Ձեր ներկայացուցիչը նաև կբաղվի Ձեր ընտանիքի վերամիավորման հնարավորություններով:

Այս փաստաթուղթն ունի միայն տեղեկատվական նպատակներ: Դրա նպատակն է միջազգային պաշտպանության համար դիմող անձանց անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել Դուբլինի ընթացակարգի վերաբերյալ: Այն ինքնին չի ստեղծում կամ առաջացնում որևէ իրավունքներ կամ իրավական պարտավորություններ: Դետությունների և քաղաքացիների՝ ըստ Դուբլինի ընթացակարգի ունեցած իրավունքներն ու պարտականությունները սահմանված են թիվ 604/2013 Կանոնակարգում (ԵՄ)։

©Եվրոպական Միություն 2014

Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:



Դուբլինյան երկրներն ընդգրկում են Եվրոպական Միության 28 երկրները (Ավստրիա (AT), Բելգիա (BE), Բուլղարիա (BG), Գերմանիա (DE), Դանիա (DK), Էստոնիա (EE), Իռլանդիա (IE), Իսպանիա (ES), Իտալիա (IT), Լատվիա (LV), Լիտվա (LT), Լեհաստան (PL), Լյուքսեմբուրգ (LX), Խորվաթիա (HR), Կիպրոս (CY), Յունաստան (EL), Յունգարիա (HU), Մալթա (MT), Միացյալ Թագավորություն (UK), Նիդերլանդներ (NL), Շվեդիա (SE), Չեխիայի Հանրապետություն (CZ), Պորտուգալիա (PT), Ռումինիա (RO), Սլովակիա (SK), Սլովենիա (SI), Ֆինլանդիա (FI), Ֆրանսիա (FR), ինչպես նաև Դուբլինի կանոնակարգին «ասոցացված» 4 երկրներ (Նորվեգիա (NO), Իսլանդիա (IS), Շվեյցարիա (CH) և Լիխտենշտեյն (LI)):



ԵԹԵ ԻՆՉ ՈՐ ԲԱՆ ՉԵՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ, ՀԱՐՏՐԵՔ ՁԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ԿԱՄ ՄԵՐ ԻԾԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍՉԻ ՕԳՆԵՆ ՁԵՉ:

Չնայած ապաստանի համար դիմել էք այս երկրում, կարող է որոշվել, որ այլ երկիր պետք է քննի ձեր պաշտպանության հայցը:

Միայն մեկ երկիր կարող է պատասխանատու լինել Ձեր պաշտպանության հայցը քննելու հարցում: Դա սահմանված է օրենքով և կոչվում է «Դուբլինի Կանոնակարգ»: Այս օրենքը մեզնից պահանջում է, որ պարզենք, թե արդյոք մենք, թե այլ երկիր է պատասխանատու քննելու Ձեր դիմումը. այն անվանվում է «Դուբլինի ընթացակարգ»:

Այս օրենքը տարածվում է 32 երկրներ ընդգրկող աշխարհագրական տարածաշրջանի վրա¹⁾: Այս փաստաթղթում այդ 32 երկրներն անվանվում են «Դուբլինյան երկրներ»:

Չպետք է փախուստի դիմեք իշխանություններից կամ փախչեք այլ դուբլինյան երկիր: Որոշ մարդիկ Ձեզ կարող են ասել, որ դա Ձեզ համար ամենալավ տարբերակն է: Եթե որևէ մեկը Ձեզ ասում է, որ փախչեք կամ գնաք իրենց հետ, ապա անմիջապես տեղեկացրեք դրա մասին Ձեր ներկայացուցչին կամ պետական մարմիններին:

Որքան հնարավոր է շուտ հայտնեք պետական մարմիններին, եթե.

- *Դուք մենակ եք և կարծում եք, որ Ձեր մայրը, հայրը, եղբայրը, քույրը, մորաքույրը²⁾, հորեղբայրը³⁾, տատիկը կամ պապիկը կարող են լինել 3-րդ Էջի քարտեզում նշված այլ 32 դուբլինյան երկրներից մեկում,*
- *Եթե այդպես է, ապա արդյոք ցանկանում եք, թե չեք ցանկանում ապրել նրանց հետ,*
- *Այս երկիր եք եկել այլ անձի հետ, և եթե այդպես է՝ ում հետ,*
- *Դուք արդեն եղել եք նշված 32 դուբլինյան երկրներից որևէ մեկում,*
- *Ձեր մատնահետքերը վերցվել են այլ դուբլինյան երկրում. մատնահետքերը Ձեր մատների արտապատկերումներն են, որ օգնում են ճանաչել Ձեզ,*
- *Դուք արդեն ապաստանի համար դիմել եք այլ դուբլինյան երկրում:*

ՇԱՏ ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՔ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԻՇՏ ԱՍԵՔ ԵՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Դուբլինի համակարգը կարող է Ձեզ օգնել պաշտպանության համար դիմելիս, եթե Ձեզ չի ուղեկցում որևէ ծնող:

Եթե Ձեր ծնողների կամ ազգականների մասին բավարար տեղեկություններ ունենանք, մենք նրանց կորոնենք դուբլինյան երկրներում: Եթե մեզ հաջողվի գտնել նրանց, մենք կփորձենք միավորել Ձեզ այն պետությունում, որտեղ գտնվում են Ձեր ծնողները կամ ազգականները: Այնուհետև այդ պետությունը կստանձնի պատասխանատվություն Ձեր պաշտպանության հայցը քննելու հարցում:

-
- 1) **3-րդ Էջում կարող եք գտնել այս տարածաշրջանի քարտեզը:**
 - 2) **Ձեր մորաքույրը կամ հորաքույրը:**
 - 3) **Ձեր հորեղբայրը կամ քեռին:**

Եթե մենակ եք և չունեք այլ ընտանիքի անդամներ կամ ազգականներ այլ դուբլինյան երկրում, շատ հավանական է, որ Ձեր դիմումը քննվի այս երկրում:

Մենք կարող ենք նաև որոշել քննել Ձեր դիմումը այս երկրում, նույնիսկ եթե օրենքով այլ երկրի է պատկանում այդ պատասխանատվությունը: Մենք կարող ենք դա կատարել մարդասիրական, ընտանեկան կամ մշակութային պատճառներով:

Այս գործընթացի ժամանակ **մենք միշտ կառաջնորդվենք Ձեր բարձրագույն շահերով** և Ձեզ չենք ուղարկի այնպիսի երկիր, որտեղ գիտենք, որ մարդու Ձեր իրավունքները կարող են ոտնահարվել:

Ի՞նչ է նշանակում, որ միշտ առաջնորդվում ենք **Ձեր բարձրագույն շահերով**:
Նշանակում է, որ մենք.

- կստուգենք, թե արդյոք հնարավոր է Ձեզ միավորել Ձեր ընտանիքի հետ մինևույն երկրում,
- կապահովենք, որ Դուք ապահով և անվտանգ լինեք, հատկապես այն մարդկանցից, որոնք կարող են Ձեզ վատ վերաբերվել կամ վնասել,
- կապահովենք, որ մեծանաք ապահով և առողջ, ունենաք սնունդ և կացարան, և Ձեր հասարակական զարգացման կարիքները բավարարվեն,
- հաշվի կառնենք Ձեր կարծիքները, ինչպես օրինակ՝ ցանկանում եք ապրել Ձեր որևէ ազգականի հետ, թե՛ ոչ:



ՁԵՐ ՏԱՐԻՔԸ

18 տարեկանից բարձր անձինք համարվում են «չափահասներ»: Նրանց ցուցաբերվում է երեխաներից և դեռահասներից («անչափահասներ») տարբեր մոտեցում:

Խնդրում ենք մեզ հայտնեք Ձեր ճիշտ տարիքը:

Եթե որևէ փաստաթուղթ ունեք, որտեղ նշված է Ձեր տարիքը, այն ներկայացրեք իշխանության մարմիններին: Եթե իշխանության մարմինները հարցնեն Ձեր տարիքը, հնարավոր է, որ Ձեզ քննի նաև բժիշկը՝ որոշելու համար, թե 18 տարեկանից բարձր եք, թե ցածր: Դուք և/կամ Ձեր ներկայացուցիչը նախ պետք է տաք Ձեր համաձայնությունը՝ նախքան որևէ բժշկական քննություն կատարելը:

ՀԱՋՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՓՈՐՁԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԱՅՆ ՀԱՐՑԵՐԻՆ, ՈՐ ՁԵԶ ՄՈՏ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՃԱՏԱԿԻ ԱՌԱՋԱՆԱԼ ԴՈՒՔԼԻՆՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՅՆ ԿԱՐՈՂ Է ՕԳՆԵԼ ՁԵԶ ԵՎ ԻՆՉ ՄՊԱՍԵԼԻՔՆԵՐ ՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱՔ:

ՄԱՏՆԱՏԵՏՔԵՐ - Ի՞նչ են դրանք: Ինչու՞ են վերցվում:

Երբ Դուք ապաստան եք հայցում, եթե 14 տարեկան եք կամ ավելի, ապա վերցվում է Ձեր մատների արտապատկերումը կամ նկարը (որը կոչվում է «մատնահետք») և փոխանցվում «Eurodac» կոչվող մատնահետքերի տվյալների բազային: Պետք է համագործակցեք մեզ հետ այս գործընթացի ժամանակ, քանի որ ապաստանի համար դիմող բոլոր մարդիկ օրենքով պարտավոր են մատնահետքեր հանձնել:

Ձեր մատնահետքերը որոշակի պահի կարող են ստուգվել՝ ճշտելու համար, թե արդյոք նախկինում երբևէ դիմել եք ապաստանի համար կամ նախկինում Ձեզնից մատնահետք են վերցրել սահմանային կետում: Եթե պարզվի, որ արդեն ապաստանի դիմում եք ներկայացրել այլ դուբլինյան երկրում, Ձեզ կարող են ուղարկել այդ երկիր, եթե այնտեղ գնալը բխում է Ձեր բարձրագույն շահերից: Այնուհետև այդ երկիրը կստանձնի պատասխանատվություն միջազգային պաշտպանության Ձեր դիմումը քննելու հարցում:

Ձեր մատնահետքերը կպահվեն 10 տարի: 10 տարի անց դրանք ինքնաբերաբար կջնջվեն տվյալների բազայից: Եթե պաշտպանության համար Ձեր հայրը հաջող ընթացք ունենա, ապա Ձեր մատնահետքերը կպահպանվեն տվյալների բազայում, մինչև դրանց ինքնաբերաբար ջնջումը: Եթե հետագայում դառնաք որևէ դուբլինյան երկրի քաղաքացի, Ձեր մատնահետքերը կջնջվեն: Eurodac-ում կպահպանվեն միայն Ձեր մատնահետքերի և գենդերային տվյալները. Ձեր անունը, լուսանկարը, ծննդյան ամսաթիվը և ազգությունը չեն ուղարկվում տվյալների բազային և չեն պահպանվում: Սակայն այդ տվյալները կարող են պահպանվել մեր ազգային տվյալների բազայում: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի դուբլինյան երկրներից դուրս որևէ այլ երկրի կամ կազմակերպության:

2015թ. հուլիսի 20-ից, Ձեր մատնահետքերը կարող են հետազոտվել ոստիկանության և Եվրոպական ոստիկանության (Եվրոպոլ) կողմից, որոնք կարող են գննել Ձեր մատնահետքերը և Eurodac տվյալների բազայից օգտվելու հայց ներկայացնել՝ լուրջ բնույթի հանցագործությունների և ահաբեկչության կանխարգելման, հայտնաբերման և հետաքննման նպատակներով:





Ի՞նչ տեղեկություններ պետք է հայտնեք պետական մարմիններին Ձեր իրադրության վերաբերյալ:

Չավանական է, որ Ձեզ կանչեն հարցազրույցի, որպեսզի հնարավոր լինի որոշել, թե որ երկիրն է պատասխանատու ապաստանի Ձեր հայրը քննելու համար: Չարցազրույցի ժամանակ մեր պետական մարմինները Ձեզ կբացատրեն «Դուբլինի ընթացակարգը» և կփորձեն պարզել, թե արդյոք հնարավոր է Ձեզ վերամիավորել Ձեր ընտանիքի հետ այլ դուբլինյան երկրում:

Եթե գիտեք, որ Ձեր ծնողները, քույրեր/եղբայրները կամ որևէ ազգական գտնվում են այլ դուբլինյան երկրում, խնդրում ենք չմոռանալ այդ մասին ասել այն անձին, ով Ձեզ հետ հարցազրույց է անցկացնում: Տրամադրեք որքան հնարավոր է շատ տեղեկատվություն, որպեսզի կարողանանք գտնել Ձեր ընտանիքին՝ անուններ, հասցեներ, հեռախոսահամարներ և այլն:

Չարցագրույցի ժամանակ Ձեզ կարող են նաև հարցնել, թե արդյոք արդեն եղել էք այլ դուբլինյան երկրում: Խնդրում ենք ասեք ճշմարտությունը:

Ձեր ներկայացուցիչը կարող է ուղեկցել Ձեզ հարցագրույցի ժամանակ՝ Ձեզ օգնելու, աջակցելու և Ձեզ համար լավագույնն իրականացնելու նպատակով: Եթե որևէ պատճառով չեք ցանկանում, որ Ձեր ներկայացուցիչը ներկա լինի հարցագրույցին, այդ մասին հայտնեք պետական մարմիններին:

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՍԿԶԲՈՒՄ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐՈՂԸ ԵՎ ՁԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ
ՁԵՉ ԿԲԱՑԱՏՐԵՆ ԲՈՒՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ: ԵԹԵ
ՈՐԵՎԷ ԲԱՆ ՉԵՔ ՀԱՍԿԱՆՈՒՄ ԿԱՄ ԱՅԼ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՔ, ԿԱՐՈՂ ԵՔ ՀԱՐՑՆԵԼ
ՆՐԱՆՑ:**

Հարցագրույցը Ձեր իրավունքն է և այն Ձեր դիմումի կարևոր մասն է:

Հարցագրույցը անց կկացվի այն լեզվով, որ հասկանում եք: Եթե չեք հասկանում հաղորդակցության լեզուն, կարող եք թարգմանիչ խնդրել, որպեսզի Ձեզ օգնի հաղորդակցվել: Թարգմանիչը թարգմանում է այն, ինչ ասում եք Դուք և հարցագրույցը վարողը: Թարգմանիչը չի կարող ավելացնել իր սեփական տեսակետները: Եթե դժվարանում եք հասկանալ թարգմանչին, ապա հայտնեք մեզ և/կամ խոսեք Ձեր ներկայացուցչի հետ:

Հարցագրույցն անց կկացվի գաղտնի: Դա նշանակում է, որ Ձեր տրամադրած տեղեկատվությունից ոչինչ, ներառյալ մեր երկրում պաշտպանության համար դիմելու փաստը, չի ուղարկվի այն անձանց կամ իշխանություններին, որոնք կարող են Ձեզ որևէ կերպ վնաս պատճառել կամ վնասել Ձեր ընտանիքի որևէ անդամի, որ դեռևս գտնվում է Ձեր հայրենի երկրում:

**ԿԱՐԵՎՈՐ Է, ՈՐ ԴՈՒՔ և ՁԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵՔ ԴՈՒՄԼԻՆԻ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՏՆԵՐԻՆ:**

Ինչքա՞ն կտևի, մինչև իմանաք, թե պետք է մեկնեք այլ երկիր, թե կարող եք մնալ այստեղ:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ այլ երկիր է պատասխանատու ճանաչվում Ձեր դիմումը քննելու հարցում:

→ Եթե սա Ձեր առաջին ապաստանի դիմումն է դուբլինյան երկրում, ապա Դուք կուղարկվեք այլ երկիր, քանի որ Ձեր մայրը, հայրը, եղբայրը, քույրը, մորաքույր/ հորաքույրը, հորեղբայր/քեռին, պապիկը կամ տատիկը գտնվում են այդ երկրում, կմիանաք նրան/նրանց և կմնաք միասին՝ Ձեր ապաստանի դիմումի քննության համար:⁴⁾

→ Եթե այստեղ չեք դիմել ապաստանի համար, սակայն նախկինում ապաստան եք խնդրել այլ դուբլինյան երկրում, ապա Ձեզ կարող են ուղարկել այդ երկիր, որպեսզի այնտեղի իշխանությունները քննեն Ձեր ապաստանի դիմումը:⁵⁾

Երկու դեպքում էլ Ձեզ այլ երկիր տեղափոխելու մասին որոշում ընդունելու համար կարող է պահանջվել մինչև հինգ ամիս՝ սկսած կամ ապաստանի համար Ձեր դիմելու պահից կամ սկսած այն պահից, երբ տեղեկացել ենք, որ միջազգային պաշտպանության համար դիմել եք այլ դուբլինյան երկրում: Իշխանությունները Ձեզ այս որոշման մասին կտեղեկացնեն որոշումն ընդունելուց հետո որքան հնարավոր է շուտ:

→ Եթե այս երկրում չեք դիմել ապաստանի համար, իսկ Ձեր ապաստանի նախկին դիմումը այլ երկրում վերջնականապես քննելուց հետո մերժվել է, մենք կամ պետք է խնդրենք այդ երկրին, որ Ձեզ ետ ընդունի, կամ սկսենք գործընթաց՝ Ձեզ ետ ուղարկելու այն երկիր, որտեղից եք ծագումով կամ որտեղ ունեք մշտական բնակություն կամ էլ որևէ այլ ապահով երրորդ երկիր:

Եթե որոշենք, որ այլ երկիր է պատասխանատու Ձեր ապաստանի դիմումի ամօնջությամբ և երբ տվյալ երկիրը, որին խնդրվել է ստանձնել պատասխանատվություն, ընդունի այն, ապա Ձեզ պաշտոնապես կհաղորդվի այն փաստի մասին, որ մենք չենք քննի Ձեր միջազգային պաշտպանության հայցը և փոխարենը Ձեզ կտեղափոխենք տվյալ պատասխանատու երկիր:

4) **Կարող է լսեք, որ սա անվանվում է «ստանձնել պատասխանատվություն»:**
5) **Կարող է լսեք, որ սա անվանվում է «ետ ընդունել»:**

Ձեր տեղափոխումը կկատարվի վեց ամսվա ընթացքում՝ սկսած այն պահից, երբ տվյալ պետությունը ստանձնի Ձեր գործի պատասխանատվությունը, կամ էլ սկսած բողոքարկման կամ վերանայման վերջնական որոշման պահից, եթե Դուք չհամաձայնեք և որոշեք վիճարկել այս որոշումը (նայեք հաջորդ բաժինը, որտեղ բացատրված է, թե դա ինչ է նշանակում): Այս ժամանակամիջոցը կարող է երկարաձգվել մինչև մեկ տարի, եթե ձեր բակաված եք կամ մինչև 18 ամիս, եթե խուսափել եք կամ փախուստի եք դիմել:



©iStockphoto / Joe Gough

Ի՞նչ է տեղի ունենում այն դեպքում, եթե չեք ցանկանում գնալ այլ երկիր:

ԴՐԱ ՄԱՍԻՆ ԶՐՈՒՑԵՔ ՁԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ:

Եթե որոշե՛ք, որ պետք է մեկնեք այլ երկիր, որպեսզի Ձեր դիմումը քննվի այնտեղ, և Դուք չհամաձայնեք դրա հետ, ապա հնարավորություն ունեք վիճարկել տեղափոխման որոշումը: Այն անվանվում է «բողոքարկում» կամ «վերանայում»:

Պետական մարմիններից տեղափոխման մասին պաշտոնական որոշումն ստանալուց հետո Դուք ունեք 21 օր Վարչական գործերով դատարանին բողոք ներկայացնելու համար: Ճատ կարևոր է, որ բողոք ներկայացնեք նշված ժամանակամիջոցի ընթացքում: Ձեր ներկայացուցիչը կօգնի Ձեզ այդ հարցում:

- Ձեզ 7 օր է հատկացվում՝ հայցելու համար, որ Ձեր տեղափոխումը կասեցվի, քանի դեռ Ձեր բողոքարկումը քննության է ենթարկվում: Դատարանը կամ ատյանը այս հայցի վերաբերյալ արագ կերպով որոշում կընդունի: Եթե այն մերժի կասեցումը, ապա Ձեզ կհայտնեն դրա պատճառների մասին:
- Այս փաստաթղթի վերջում նշված է տեղեկատվություն այն մասին, թե ինչ պետական մարմնի դիմել՝ այս երկրում որոշումը բողոքարկելու համար:

«Բողոքարկման» գործընթացի ժամանակ Ձեզ իրավաբանական օգնության հնարավորություն կտրվի, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, լեզվական աջակցություն թարգմանչի կողմից: Կարող եք իրավաբանական անվճար օգնություն խնդրել, եթե դրա համար վճարելու դրամ չունեք: Այս փաստաթղթի վերջում նշված են այն կազմակերպությունների կոնտակտային տվյալները, որոնք իրավաբանական օգնություն են տրամադրում և Ձեզ կարող են աջակցել բողոքարկման գործընթացում:

Կալանք

Այն անձինք, ովքեր ազատ կերպով չեն կարող ճամփորդել, ուր ցանկանան, և բնակվում են փակ շինության ներսում, որը չեն կարող լքել, գտնվում են «կալանքի» մեջ:

Եթե Դուք առանց ուղեկցողի անչափահաս եք, հավանաբար ապրում եք այնպիսի կացարանում, որտեղ կանոններ կան, ինչպես օրինակ՝ գիշերը կամ երբ դրսում մուտք է, մնալ շենքի ներսում, հայտնել Ձեզ խնամող մարդկանց, երբ դուրս եք գալիս և երբ եք վերադառնալու: Այս կանոնների նպատակն է պաշտպանել Ձեր անվտանգությունը: Դա չի նշանակում, որ Դուք կալանքի վայրում եք:

ԵՐԵՆԱՆԵՐԻՆ ԳՐԵԹԵ ԵՐԲԵՔ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՉԵՆ ՎԵՐՑՆՈՒՄ:

Դուք կալանքի մեջ եք: Եթե վստահորեն չգիտեք, թե արդյոք կալանքի մեջ եք, թե՛ ոչ, առանց հապաղելու հարցրեք իշխանության մարմիններին, Ձեր ներկայացուցչին կամ Ձեր իրավաբանական խորհրդատուին⁶⁾: Նրանց կարող եք պատմել Ձեր իրադրության մասին, և եթե կալանքի մեջ եք՝ կալանքի որոշումը վիճարկելու հնարավորությունների մասին:

Առկա է ռիսկ, որ Դուք լինի ընթացակարգի ժամանակ Դուք կալանքի մեջ հայտնվեք: Հիմնականում դա պատահում է այն ժամանակ, երբ իշխանությունները չեն հավատում, որ 18 տարեկանից ցածր եք և գտնում են, որ կփախչեք կամ կթաքնվեք իրենցից, քանի որ վախենում եք, որ Ձեզ այլ երկիր կուղարկեն:

Դուք իրավունք ունեք գրավոր կերպով տեղեկացվելու Ձեր կալանավորման պատճառների մասին և թե ինչպես կարող եք վիճարկել կալանավորման որոշումը: Դուք նաև իրավաբանական օգնության իրավունք ունեք, եթե ցանկանում եք վիճարկել կալանավորման որոշումը. այսինքն՝ եթե դժգոհ եք, խոսեք Ձեր ներկայացուցչի կամ իրավաբանական խորհրդատուի հետ:

Եթե Դուք լինի ընթացակարգի ժամանակ կալանավորվեք, ապա ընթացակարգի ժամանակամիջոցները Ձեզ համար կլինեն հետայալը՝ մենք կխնդրենք այլ երկրի ստանձնել Ձեր գործի պատասխանատվությունը՝ ապաստանի համար Ձեր դիմումը

6) Անձ, ով իշխանությունների կողմից ընդունվում է որպես օրենքի առջև Ձեր իրավունքները ներկայացնող: Ձեր ներկայացուցիչը և/կամ իշխանության մարմինները Ձեզ խորհուրդ կտան, թե արդյոք ունեք նրա կարիքը, բայց Դուք կարող եք նաև խնդրել նրանց Ձեր գործը հանձնարարել որևէ մի իրավաբանի: Տես՝ այս փաստաթղթի վերջը՝ տեղեկանալու համար այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են Ձեզ իրավաբանական ներկայացուցչություն տրամադրել:

ներկայացնելուց հետո **մեկ ամսվա** ընթացքում: Չարցումն ստացած պետությունը պետք է պատասխանի դրանից հետո **երկու շաբաթվա** ընթացքում: Եվ վերջապես, եթե մնաք կալանքի մեջ, Ձեր տեղափոխումը պետք է իրականացվի պատասխանատու երկրի կողմից հարցումն ընդունելուց հետո **վեց շաբաթվա** ընթացքում:

Եթե որոշեք վիճարկել տեղափոխման որոշումը, քանի դեռ գտնվում եք կալանքի մեջ, ապա պետական մարմինները պարտավորություն չունեն տեղափոխելու Ձեզ վեց շաբաթվա ընթացքում: Այդ ժամանակ պետական մարմինները Ձեզ կհայտնեն Ձեզ համար հնարավոր տարբերակների մասին:

Եթե պետական մարմինները չպահպանեն Ձեր գործի պատասխանատվությունն ստանձնելու համար այլ պետությանը հարցում ուղարկելու ժամանակամիջոցները կամ ժամանակին չիրականացնեն Ձեր տեղափոխումը, ապա համաձայն Դուբլինի Կանոնակարգի՝ տեղափոխման նպատակով կատարվող Ձեր կալանավորմանը վերջ կտրվի: Այդ դեպքում կկիրառվեն 11 -րդ էջում նշված սովորական ժամանակամիջոցները:





Դրո՞ւք են իմ իրավունքները այն ժամանակամիջոցում, մինչ որոշվի, թե ով է պատասխանատու իմ գործի համար:

Դուք իրավունք ունեք մնալ այս երկրի ներսում, եթե մենք ենք պատասխանատու քննելու Ձեր ապաստանի հայցը կամ եթե այլ երկրի է վերապահված այդ հարցը՝ մինչ Դուք կտեղափոխվեք այնտեղ: Եթե այն պետությունն է պատասխանատու քննել Ձեր ապաստանի հայցը, որտեղ այժմ գտնվում եք, ապա իրավունք ունեք մնալ այստեղ ամնվազն այնքան, մինչև Ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ ընդունվի առաջին որոշումը: Ձեզ նաև իրավունք է վերապահված օգտվել նյութական ապահովության միջոցներից, օր.՝ կացարան, սնունդ և այլն, ինչպես նաև ամենամահաբաժնու բժշկական օգնություն և արտակարգ իրավիճակների բուժսպասարկում: Դուք նաև իրավունք ունեք հաճախել դպրոց:

Ձեզ հնարավորություն կընձեռնվի բանավոր և/կամ գրավոր կարգով մեզ տեղեկություններ տրամադրել Ձեր իրավիճակի մասին, դուբլինյան երկրների տարածքում գտնվող Ձեր ընտանիքի անդամների մասին և հայտնել այդ ամենը Ձեր մայրենի լեզվով կամ այլ լեզվով, որին լավ եք տիրապետում (կամ թարգմանչի օգնությամբ, եթե անհրաժեշտ է): Ձեզ կտրամադրվի նաև Ձեզ այլ երկրի տեղափոխելու մասին որոշման գրավոր պատճենը: Դուք նաև իրավունք ունեք դիմել մեզ՝ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու խնդրանքով և/կամ կապ հաստատել այս երկրի ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) գրասենյակի հետ:

Ձեր ներկայացուցիչը և պետական իշխանության մարմինները Ձեզ ավելի մանրամասն կբացատրեն Ձեր իրավունքները:

Ի՞նչ է կատարվում Ձեր տրամադրած անձնական տեղեկատվության հետ: Ինչպե՞ս կարող եք իմանալ, որ այն չի օգտագործվում սխալ նպատակներով:

Դուք ինչպես երկրների իշխանությունները կարող են Դուք ինչի ընթացակարգի ժամանակ Ձեր տրամադրած տեղեկությունները փոխանակել՝ միայն Դուք ինչի Կանոնակարգով սահմանված իրենց պարտականությունների կատարման նպատակով:

Դուք իրավունք ունեք ձեռք բերել.

- Ձեզ վերաբերվող տեղեկատվություն: Դուք իրավունք ունեք պահանջելու, որ այդ տվյալները փոխվեն, եթե ճշգրիտ կամ ստույգ չեն, կամ ջնջվեն, եթե անօրինական կարգով են մշակվել,
- Այն տեղեկատվությունը, որով բացատրվում է, թե ինչպես պահանջել Ձեր տվյալների ճշգրտումը կամ ջնջումը, այդ թվում հատուկ իրավասու մարմինների կոնտակտային տվյալները, որոնք պատասխանատու են Ձեր Դուք ինչի ընթացակարգի համար, ինչպես նաև տվյալների պաշտպանության ազգային մարմինների կոնտակտային տվյալները, որոնք զբաղվում են անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող հարցերով:

Ուր կարող եք դիմել օգնության համար

(Լրացնել անդամ-պետության վերաբերյալ հատուկ տեղեկություններ, մասնավորապես)`

Ապաստարանի ղեկավար մարմնի կոնտակտային տվյալներ

Maahanmuuttovirasto (Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն)

PL 18, 00581 Helsinki

+ 358 295 419 600

Այդ հարցով ծառայության համարը`

+ 358 295 419 627,

Երբ-Յնգ 10-11

www.migri.fi

Առանց ուղեկցությամբ

անչափահասի ներկայացուցիչ

Շրջանային դատարանը կնշանակի ներկայացուցիչ ապաստարան հայցող ուղեկցող չունեցող անչափահասին: Ընդունելությունների կենտրոնը կներկայացնի շրջանային դատարան ներկայացուցիչ նշանակելու դիմում:

Երեխաների պաշտպանություն

Ընդունելությունների կենտրոնից պահանջվում է կազմակերպել երեխայի ամողջության համար պահանջվող սոցիալական ապահովության բոլոր ծառայությունները և գործին նշանակված սոցիալական աշխատողի կողմից դրանց բարելավումը: Հարցեր ունենալու դեպքում գրուցեք ձեր ընդունելությունների կենտրոնի սոցիալական աշխատողի հետ:

Դուբլինյան ընթացակարգի համար պատասխանատու մարմին

Maahanmuuttovirasto (Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն)

Կոնտակտային տվյալները ներկայացված են վերևում:

Ազգային վերահսկողության մարմնի (տվյալների պաշտպանության) կոնտակտային տվյալներ

Tietosuojavaltuutetun toimisto

(Տվյալների պաշտպանության հարցերով օմբուդսմեն)

PL 800, FI-00521 Helsinki

+ 358 295 666 700

Տեղեկատվական ծառայություն`

+358 295 616 670,

Երկ-Յնգ 9-11 և 13-15, Ուրբ 9-12

tietosuoja@om.fi

www.tietosuoja.fi

Eurodac հսկիչի և իր ներկայացուցչի նույնականություն

Կոնտակտային կետեր` Ոստիկանության ազգային խորհուրդ (Poliisihallitus) և Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն (Maahanmuuttovirasto)

Վերահսկողի գրասենյակի կոնտակտային տվյալները,

+ 358 295 480 181

Poliisihallitus (Ոստիկանության ազգային խորհուրդ)

PL 22, FI-00521 Helsinki

kirjaamo.poliisihallitus@poliisi.fi

Maahanmuuttovirasto (Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն)

PL 18, FI-00581 Helsinki

+358 295 419 600

Այդ հարցով ծառայության համարը`

+358 295 419 627, Երկ-Յնգ 10-11

www.migri.fi

Եթե դուք ցանկանում եք տեսնել ձեզ վերաբերող` Eurodac համակարգում գրանցված տվյալները, անձնապես հայտ ներկայացրեք ոստիկանության բաժանմունք: Ձեզ հետ ունեցեք անձը հաստատող փաստաթուղթ: Մենք խորհուրդ ենք տալիս, որ դուք կապվեք այն ոստիկանության բաժանմունքի հետ, որն ընդունել է ձեր ապաստարանի դիմումը: Ոստիկանական ծառայության բաժանմունքի կոնտակտային տեղեկությունը հասանելի է Ոստիկանության ինտերնետային կայքում poliisi.fi հասցեով:

Suomen Punainen Risti (Ֆինլանդիայի կարմիր խաչ)

Tehtaankatu 1 a
FI-00140 Helsinki
+358 20 701 2000
info@redcross.fi
www.redcross.fi
Ընտանիքի բացակայող անդամների որոնում:

Իրավական օժանդակության գրասենյակներ և փախստականների աջակցման կազմակերպություններ

Իրավական օժանդակությունը տրամադրվում է իրավական օժանդակության գրասենյակների և այլ իրավական հարցերով զբաղվող գրասենյակների և փաստաբանների կողմից, որոնք հայտնել են ընդունելությունների կենտրոնին ապաստարան հայցողների իրավաբանական ծառայություններ մատուցելու իրենց ցանկության մասին: Իրավական օժանդակության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք գրուցել ընդունելությունների կենտրոնի անձնակազմի հետ:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ/ԻՕՄ) կոնտակտային տվյալներ

IOM Helsinki
Unioninkatu 13, 6th floor
PL 851, FI-00101 Helsinki
+358 9 684 1150
iomhelsinkiavr@iom.int
www.iom.fi

Եթե դուք ցանկանում եք կամավոր վերադառնալ ձեր հայրենիք, խորհուրդ հայցեք ընդունելությունների կենտրոնից:

Փախստականների գործերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի մոտակա շրջանային գրասենյակ

UNHCR
Ynglingagatan 14, 6 tr
SE-113 47 Stockholm
Sweden
Tel. +46 8 457 48 80
swest@unhcr.org

